

**ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ**

Ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքը իշխանությունների տարանջատման սկզբունքն է, որը զսպումների և հակակշիռների համակարգի միջոցով երաշխավորում է, որ իշխանության որևէ թև դուրս չի մնա վերահսկողությունից և հնարավորություն չի ունենա գերակայել մյուսների նկատմամբ: Այս մեխանիզմների գործունակության ապահովման գործում անգնահատելի է դատական իշխանության դերը: Դատարաններն են ի վերջո որոշում, ինչն է օրինական և ինչն է ոչ օրինական, որն է ճիշտ և որը սխալ տվյալ պետության օրենքների համաձայն: Սակայն սա հնարավոր է միայն այն դեպքում, երբ դատական համակարգը իսկապես համարվում է իշխանություն, այսինքն պետության դատական համակարգը համապատասխանում է այն բարձր պահանջներին և չափանիշներին, որոնք մշակվել են քաղաքակիրթ հանրության կողմից և շարադրված են «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի 14 հոդվածում:

Այն, որ նախկին դատական համակարգը և դատավարական մեխանիզմներն ի վիճակի չէին սպասարկել ազատ շուկայական տնտեսությունը, անվիճելի է: Իրավական համակարգը, հատկապես քաղաքացիաիրավական ոլորտը հարմարեցված էր տնտեսության պլանային դրվածքին, դատավարությունը կրում էր ինկվիզիցիոն բնույթ:

Հայաստանի օրենսդրական դաշտին բնորոշ էր այն իրավիճակը, որը հատուկ էր նախկին ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների համար՝ հասարակական հարաբերությունների գերակշիռ մասը կարգավորվում էր ենթաօրենսդրական ակտերով: Գործում էին սակավաթիվ օրենսգրքեր և օրենքներ, իսկ մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ ակտերի մեծ մասը ընդունվում էին նախարարությունների և գործադիր իշխանություն իրականացնող այլ մարմինների կողմից: Հատկանշական է, որ այդ ակտերի գերակշիռ մասը հասու չէր հանրությանը, իսկ ոստիկանության և օպերատիվ-հետախուզական այլ մարմինների գործունեությունը կարգավորող ակտերը ոչ միայն չէին հրապարակվում, այլ կրում էին գաղտնի բնույթ:

Դատավարությունը Հայաստանում մինչև 1999 թվականի օրենսգրքերի ընդունումը ըստ էության կրում էր ինկվիզիցիոն բնույթ, որտեղ էականորեն նվազեցված էին կողմերի իրավունքները և հնարավորությունը ռեալ մրցակցելու միմյանց հետ: Այս փաստը ոչ միայն բացասաբար էր անդրադառնում գործով ապացույցների ձեռքբերման, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտության վրա, այլև իրական հնարավորություններ էր ստեղծում անմեղության կանխավարկածի խախտման համար:

Փաստ է, որ Հայաստանում տեղի ունեցան լուրջ դատաիրավական բարեփոխումներ: Սահմանադրությունը սահմանեց նոր, դատական որակապես այլ համակարգ, որը էականորեն տարբերվում էր նախկին երկաստիճան համակարգից:

Այս նոր համակարգի կառուցման հիմնաքարերը դրեց Սահմանադրությունը, որի 38 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք»: Նույն այդ հոդվածը հռչակեց Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը:

Դատաիրավական բարեփոխումների հիմնական ուղղությունների ուրվագծման համար որոշիչ նշանակություն ունեցավ նաև Սահմանադրության 39 հոդվածը, համաձայն որի. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Դատաիրավական բարեփոխումների իրականացման արդյունքում ծնված դատական համակարգը արդեն ավելի քան երկու տարեկան է: Ինչպիսի արդյունքներ է ունեցել դատական համակարգը անցած երկու տարիների ընթացքում:

Այն, որ դատական համակարգին հաջողվեց առանց ցնցումների շարունակել արդարադատության գործառույթի իրականացումը, կրճատվեց դատական իշխանության վրա գործադիր իշխանության ազդեցությունը, դատական համակարգը ստացավ բյուջետային և ֆինանսական ինքնուրույնություն, մանրամասն օրենսդրական կանոնակարգման ենթարկվեցին արդարադատության նախարարի լիազորությունները՝ դատավորների կարգապահական

պատասխանատվության առումով, չի կարելի չհամարել դրական տեղաշարժ: Այս ամենով հանդերձ, նկատվեցին դրական տեղաշարժեր հասարկության վերաբերմունքի առումով դատական իշխանության նկատմամբ: Այսպես, եթե 1995-99թթ. ընթացքում քննվել է 9 365 քաղաքացիական գործ, ապա 1999-2000թթ. ընթացքում՝ 50 977: Օրենսդրական և գործնական կիրառում ստացան դատավորների անկախության այնպիսի կարևոր երաշխիքներ, ինչպիսիք են՝ անփոփոխելիությունը, գործունեության նյութական և սոցիալական երաշխիքները /հիարկե այս երաշխիքները դեռևս հեռու են բավարար լինելուց/:

Բացի վերը շարադրված քայլերից, լուրջ ինստիտուցիոնալ վերափոխումների ենթարկվեցին նաև այլ ինստիտուտներ: Մասնավորապես, անցումը մրցակցային դատավարության ապահովեց փաստաբանների պատշաճ մասնակցությունը ապացույցների հավաքման և գնահատման գործընթացին, իսկ «Փաստաբանական գործունեության մասին» օրենքը սահմանեց անհրաժեշտ նախադրյալներ անկախ փաստաբանական կորպորացիաների ձևավորման և զարգացման համար: Դատաիրավական համակարգի բարեփոխման կարևոր քայլերից էր դատական ակտերի հարկադիր կատարման համակարգի բարեփոխումը: Առանձին դատարաններին կից գործող դատական կատարածուների անարդյունավետ համակարգը վերափոխվեց կենտրոնացված կառույցի գործադիր համակարգի ներսում, ինչը կտրուկ բարելավեց այս ոլորտում ստեղծված անմխիթար վիճակը:

Չնայած դատական նոր համակարգի բնականոն գործունեությանը, այսօր դատաիրավական համակարգում ստեղծված իրավիճակը հեռու է կատարյալից: Այդ մասին է վկայում ոչ միայն ստեղծված իրավիճակի հակասահմանադրականությունը, այլև համակարգի առանձին տարրերի գործունեության արդյունավետության վերլուծությունը:

Մինչև խնդրին անդրադառնալը նպատակահարմար է մեջբերում կատարել 2000 թվականի մարդկային զարգացման ազգային զեկույցից. «ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված էր ստեղծել տնտեսական դատարաններ, իսկ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին) թվարկում է այն գործերը, որոնք ենթակա են տնտեսական դատարանների քննությանը: Սակայն իրականում ստեղծվեց միայն վերաքննիչ տնտեսական դատարան, որի

պատճառով մասնագիտական դժվարություններ են առաջացել տնտեսական վեճերը դատական կարգով լուծելու խնդրում»:

Մեջբերման նպատակը ոչ թե արձանագրված իրողությունները հանրությանը՝ որպես հայտնություն ներկայացնելն է, այլ դատախրավական բարեփոխումների իրականացման բոլոր պատասխանատուների ուշադրության հրավիրումն է այն հանգամանքին, որ եթե որևէ լուծման անտրամաբանականության կամ առավել ևս, հակասահմանադրականության փաստերը ակնհայտ են, և եթե որևէ կերպ ներպետական ինստիտուտների ուշադրությունից այդ փաստը վրիպի, միջազգային կառույցները, որոնց ինտեգրված է մեր պետությունը, այդ փաստերը անպատճառ կարձանագրեն և համապատասխան հետևություններ այսպես թե այնպես կարվեն:

Իսկ խնդիրը կայանում է նրանում, որ Հայաստանում մասնագիտացված տնտեսական դատարաններ չստեղծելու փաստով տեղի ունեցավ Սահմանադրության 92 հոդվածի պահանջների ուղղակի խախտում: Տնտեսական գործերով վերաքննիչ դատարանի ստեղծումը չի կարող դիտվել մասնագիտացված տնտեսական դատարանի ստեղծում, քանի որ՝

- համաձայն Սահմանադրության, վերաքննիչ դատարանները կազմում են ընդհանուր իրավասության դատական համակարգի մի օղակը.
- առաջին անգամ ըստ էության գործը քննող մասնագիտացված դատարանի բացակայությունը վկայում է մասնագիտացված դատարանների բացակայության մասին ընդհանրապես.
- տնտեսական գործերով վերաքննիչ դատարանի վերջնական դատական ակտերը ենթակա են վերանայման ընդհանուր իրավասության դատական համակարգի բարձրագույն դատական ատյանի կողմից.
- վերաքննիչ դատարանների դատավորների նշանակման կարգը չի տարբերվում առաջին ատյանի դատարանների դատավորների նշանակման կարգից, նրանց համար չկան սահմանված հավելյալ մասնագիտական պահանջներ:

Վերը շարադրվածը ապացուցում է Հայաստանում տնտեսական դատարան չստեղծելու փաստը:

Իսկ ինչ պրակտիկ իրավիճակ է ստեղծվել երկրում տնտեսական բնույթի վեճերի լուծման բնագավառում: Հարկ է արձանագրել, որ ստեղծված իրավիճակը անընդունելի է ոչ միայն

սահմանադրականության տեսանկյունից, այլև արդյունավետ դատական համակարգ ունենալու անհրաժեշտության տեսանկյունից:

Նախ, նախընթաց դատական պրակտիկան վկայում է այն մասին, որ տնտեսական գործերի թիվը էականորեն ավելանում է: Եթե 1999թ-ի ընթացքում ՀՀ տնտեսական գործերով վերաքննիչ դատարան մուտք է եղել 230 քաղաքացիական գործ, ապա 2000թ-ի ընթացքում այդ գործերի թիվը հասել է 367-ի:

Երկրորդ, տնտեսական գործերը մեծ ի մասամբ լուծման առումով առավել բարդ են և ժամանակատար, քան քաղաքացիական գործերն ընդհանրապես: Այսպես, եթե քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան 2000 թ. ընթացքում մուտք է եղել 1810 քաղաքացիական գործ, ապա տնտեսական գործերով վերաքննիչ դատարան մուտք է եղել 367 գործ: Համապատասխանաբար քաղաքացիական և տնտեսական վերաքննիչ դատարանների կողմից կայացվել են 1123 և 177 վճիռներ: Չնայած Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը գործում է ինը դատավորի կազմով (տնտեսականում դրանց թիվը վեցն է), տարբերությունը պայմանավրված է ոչ միայն այդ հանգամանքով: Այս թվերի տարբերությունը ոչ թե վկայում է այն մասին, որ տնտեսական գործեր քննող դատավորները 8-9 անգամ ավելի թերծանրաբեռնված են քաղաքացիական գործեր քննող դատավորներից, այլ այն մասին, որ տնտեսական վեճերը համապատասխան տոկոսով ավելի բարդ են, քան մյուս քաղաքացիական գործերը: Որպես հավելյալ պատճառ կարելի է նշել նաև վերաքննության ծավալները և այս ոլորտում ձևավորված դատական պրակտիկան, բայց սա առանձին քննարկման նյութ է:

Երրորդ, ՀՀ տնտեսական գործերով վերաքննիչ դատարանը 2000թ. ընթացք տրված 311 գործերից 177-ով կայացրել է վճիռներ, այդ թվում 17-ով գործի վարույթը կարճվել և հաստատվել է կողմերի հաշտության համաձայնությունը: Այդ վճիռներից 71-ով դատարանը կայացրել է առաջին ատյանի դատարանի վճիռներին նույնական վճիռներ, 13-ով՝ մասնակի փոփոխություններով, իսկ 93-ով առաջին ատյանի դատարանի վճիռների համեմատ այլ բովանդակությամբ վճիռներ: Ինչպես ակնհայտորեն երևում է՝ առաջին ատյանի դատարանների՝ տնտեսական գործերով կայացված վճիռների մոտ 60 տոկոսը Տնտեսական դատարանում փոփոխվում է ամբողջությամբ կամ մասնակի: Եվ դա բնական է, քանի որ առաջին ատյանի դատարանի դատավորը քննում է ոչ միայն բոլոր քաղաքացիական գործերը, այլև քրեական, զինվորական, վարչական և այլ բնույթի գործեր: Ի նկատի ունենալով տնտեսական գործերի լուծման բարդությունը, դրանց

քննությունը վերապահելը ընդհանուր իրավասության դատարաններին չի կարող արդյունավետ համարվել: Ի հաստատումն այս պնդման հարկ է նշել, որ Տնտեսական դատարանի վճիռների վերանայման արդյունքում դրանց բեկանումների տոկոսը շատ փոքր թիվ է կազմում:

Մեր երկրում ավանդաբար, հատկապես խորհրդային տարիներին, հասարակությունը այնքան էլ բարեհաճ վերաբերմունք չի ունեցել դատական համակարգի նկատմամբ: Սրա հիմնական պատճառը անվստահությունն է այս համակարգի նկատմամբ: Ցավոք անվստահության հատկանիշներ դատական համակարգի նկատմամբ նշմարվում են նաև այսօր՝ հետբարեփոխումային ժամանակահատվածում:

Համաշխարհային Բանկի առաքելության օժանդակությամբ անկախ փորձագետների կողմից անցկացված հասարակական հարցման արդյունքների համաձայն հասարակությունը լուրջ կասկածներ ունի արդարադատություն իրականացնողների անաչառության և ազնվության նկատմամբ: Հարցմանը մասնակցողների 26 տոկոսը դժվարացել է պատասխանել դատավորների անհատական հատկանիշներին վերաբերվող հարցմանը: Կոնկրետ հատկանիշների թվից ամենամեծ տոկոսը բաժին է հասել «բարեկրթությանը» /25 տոկոս/ և «արհեստավարժությանը» /22 տոկոս/: «Ազնվությանը» որպես մասնագիտական հատկանիշ հայկական դատավորների համար, նախապատվություն են տվել հարցմանը մասնակցողների 2 տոկոսը: Հասարակության արդարացի դժգոհությունը ունի իր հիմքերը, մասնավորապես, համակարգի որոշ ներկայացուցիչների կոռումպացվածությունը, մամուլի և դատական իշխանության բնականոն հարաբերությունների բացակայությունը, ինչը նպաստում է հասարակական անբարենպաստ կարծիքի ձևավորմանը, դատավարական «ծանր» ընթացակարգերը, որոնք տեղիք են տալիս դատական քաշքշուկներին: Սակայն ամենաեական գործոնը դա դատական համակարգի գործունեության արդյունավետության գործոնն է: Իսկ եթե այդ անարդյունավետ համակարգը գործում է տնտեսական վեճերի լուծման բնագավառում, ապա որպես արդյունք ունենում ենք ոչ միայն դատական համակարգի հեղինակազրույթ, այլև անբարենպաստ իրավիճակ տնտեսական կյանքում և ներդրումային քաղաքականության ոլորտում:

Հայաստանի Հանրապետության՝ եվրոխորհրդին անդամակցելը նոր հնարավորություն է բացում դատա-իրավական բարեփոխումների խթանման, լրացուցիչ հնարավորություններ ստեղծում միջազգային

իրավունքի նորմերի և համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքների հիման վրա անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2000 թվականի հունիսի 28-ի թիվ 221 որոշմամբ արձանագրվել է Հայաստանի պարտավորությունը՝ հարգել մի շարք հանձնառություններ, այդ թվում դատա-իրավական բնագավառում: Համաձայն որոշման 4-րդ կետի, Հայաստանը պարտավորվել է շարունակել դատաիրավական բարեփոխումները:

2000 թվականի մարտի յոթին ՀՀ Ազգային ժողովը վավերացրեց Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության միջև կնքված վարկային պայմանագիրը՝ որով նախատեսվում է լուրջ ներդրումներ իրականացնել դատաիրավական բարեփոխումների ապահովման ուղղություններով: Վարկային ծրագիրը ուղղված է դատական իշխանության գործունեության իրականացման պաշտպանությանը և իրավական համակարգի բարելավմանն ուղղված Հայաստանի կառավարության ջանքերին:

Եվ վերջապես, այսօր շարունակվում են սահմանադրական բարեփոխումները: Շատ բան կախված է նրանից, թե ինչպիսի լուծումներ կհաջողվի ամրագրել բարեփոխվելիք Սահմանադրության նախագծում, մասնավորապես դատական իշխանության վերաբերյալ: Ասօր մենք ունենք պատմական հնարավորություն շտկելու ստեղծված անթույլատրելի իրավիճակը, օրենսդրական բարեփոխմամբ հասնելու ոչ միայն սահմանադրական անհամապատասխանատվության վերացմանը և դատական համակարգի արդյունավետության բարձրացմանը, այլև տնտեսության զարգացման լրացուցիչ խթանի ստեղծմանը, ներդրումների համար բարենպաստ իրավիճակ ստեղծելուն:

Դատաիրավական բարեփոխումների հետագա շարունակման հիմքը նրանց հասարակական անհրաժեշտությունն է և դեմոկրատական պրոցեսների անշրջելիությունը: Տնտեսական դատարանի ստեղծումն այսօր հասարակական անհրաժեշտություն է և թելադրված է տնտեսության բնականոն զարգացման տրամաբանությամբ:

Հովհաննես Մանուկյան

*ՀՀ տնտեսական գործերով
վերաքննիչ դատարանի նախագահ,
ԱՊՀ տնտեսական դատարանի պլենումի անդամ*